ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Ենթադրում է, որ իւրաքանչիւր արուեստ ու հետազօտութիւն եւ, նմանապէս, իւրաքանչիւր արարք ու գործ հետամուտ են մի որոշակի արդիւնքի: Այդ իսկ պատճառով, արդիւնքն արդարացիօրէն հռչակում է մի բան, որին ձգտում են բոլորը: Արդիւնքներում, սակայն, նկատւում են որոշակի տարբերութիւններ՝ մի դէպքում գործ ունենք արարքների հետ, մէկ այլ դէպքում՝ դրանցից առանձնացող արդիւնքների հետ: Երբ արդիւնքներն առանձնանում են արարքներից՝ նրանք, ըստ տրամաբանութեան, պէտք է աւելի արժէքաւոր լինեն, քան բուն գործողութիւնները:

Ուստի, եթէ մեր արարքները հետամուտ են այնպիսի նպատակի, որին մենք ձգտում ենք որպէս վերջնական արդիւնքի (մնացեալ ամէնին ձգտելով յանուն այդ նպատակի), այսինքն չենք ձգտում ամէնին՝ յանուն մէկ այլ բանի (քանզի այդ դէպքում գործընթացը կը ձգտէր անվերջութեան, իսկ մեր ձգտումը կը դառնար դատարկ ու անիմաստ), ապա ակնյայտօրէն սա պէտք է լինի արդիւնքը՝ եւ գլխաւոր նպատակը: Ուրեմն, այդ նպատակի մասին մեր պատկերացումները մեծապէս չե՞ն ազդի արդեօք մեր կեանքի վրայ: Եւ մենք, թիրախ ունեցող նետաձիգի պէս, արդեօք աւելի յաջողակ չե՞նք լինի նպատակակէտին խփելու հարցում…

Եւ, եթէ նոյնիսկ նպատակը նոյնն է հասարակ մահկանացուի եւ պետութեան համար, վերջինիս նպատակը, ամէն դէպքում թւում է աւելի մեծ ու աւելի համապարփակ՝ ինչպէս դրան հասնելու, այնպէս էլ այն պահպանելու առումով: **Եւ, թէպէտ մէկ առանձին մարդու նպատակին հասնելն արժանաւոր գործ է, այնուհանդերձ, աւելի յարգի եւ գովելի է պետութեան կամ համայնքի նպատակին ծառայելը:** Այս հարցերն էլ հանդիսանում են մեր հետազօտութեան առարկան, քանզի, որոշակի իմաստով, դա էլ է քաղաքականութիւն:

Իմացութիւնն ու ամէն մի արարք հետամուտ են որոշակի նպատակի: Իսկ ինչի՞ն է հետամուտ քաղաքականութիւնը եւ ո՞րն է գործունէութեամբ հասանելի արդիւնքներից բարձրագոյնը: Գոյութիւն ունի չգրուած մի համընդհանուր կարծիք (քանի որ, թէ հասարակ ժողովուրդը, թէ բարձրաստիճան խաւերն այդ հարցում համակարծիք են), որ դա երջանկութիւնն է, որն էլ իր հերթին նոյնացւում է լաւ կեանքի եւ բարօրութեան հետ: Սակայն նրանք տարակարծիք են երջանկութեան բովանդակութեան վերաբերեալ եւ շատերի պատկերացումները տարբերւում են իմաստունների գնահատականներից:

Ինչեւէ, վերսկսենք մեր քննարկումն այնտեղից, ուր կանգ առանք: **Դատելով մարդկանց ապրելակերպից, շատերը, եւ հիմնականում ամենագոեհիկ կարգի մարդիկ, կեանքի նպատակը կամ երջանկութիւնը նոյնացնում են (ոչ ամբողջովին հիմնազուրկ կերպով) հաճոյքի հետ: Ըստ այդմ էլ, նրանք սիրում են վայելքներով լի կեանքը: Կարելի է ասել, որ գոյութիւն ունեն ապրելակերպի երեք հիմնական տեսակներ՝ վայելքասիրականը, քաղաքականը եւ, երրորդը՝ կենսախոհականը:** Մարդկութեան զգալի մասն, իրենց ճաշակի առումով, ակնյայտօրէն նուաստ են՝ գերադասելով գազաններին յատուկ կենսակերպը: Իրենց աշխարհայեացքի արդարացման համար նրանք որոշակի հիմք են տեսնում այն բանում, որ **վերին խաւերին պատկանողներից շատերը նոյն այդ ճաշակին են:**

Հոչակաւոր մարդկանց ապրելակերպի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ բարձրաստիճան եւ ակտիւ կենսական դիրքորոշմամբ մարդիկ **երջանկութիւնը նոյնացնում են փառքի հետ**, քանի որ դա է, վերջին հաշուով, քաղաքական կեանքի նպատակը: Սակայն դա չափազանց մակերեսային է թւում մեր փնտրածի համեմատ, քանի որ փառք ու պատիւն աւելի շատ կախուած են իրենց վերաբերմունքն արտայայտող այլ մարդկանցից, քան թէ այն անձից, ով ստանում է այդ շնորհը: Մինչդեռ արժանիքը, ըստ մեզ, պէտք է յատուկ լինի անհատին եւ հեշտութեամբ չօտարուի նրանից: Աւելին, մարդիկ, ըստ ամենայնի, հետամուտ են լինում փառքին, իրենց առաքինութիւնը հաստատելու համար: Առնուազն այն մարդիկ, ովքեր օժտուած են կեանքի խոհեմութեամբ, ձգտում են արժանանալ պատուի, ընդ որում արժանանալ դրան այն մարդկանց շրջանակում, ովքեր իրենց ճանաչում են եւ ջանում են հասնել այդ ամէնին իրենց առաքինութեան շնորհիւ: Ըստ նրանց, սեփական առաքինութիւնը գերադասելի է մնացեալից: Հաւանաբար, կարելի է նոյնիսկ ենթադրել, որ քաղաքական կեանքում դա կարող է աւելի կարեւոր նպատակ լինել, քան սոսկ փառքը: Սակայն սա էլ է թւում թերի՝ առաքինութեամբ օժտուած լինելը, փաստօրէն համեմատելի է քնած լինելուն, կամ ցմահ անգործութեանը, կամ, աւելին, ծանրագոյն տառապանքներ եւ դժբախտութիւններ կրելուն: Մինչդեռ նման կեանքով ապրած մարդուն ոչ ոք երջանիկ չի համարի, բացառութեամբ ամէն գնով որեւէ գաղափար ապացուցելու նուիրեալների դէպքի: Այս հարցի արծարծումը կարելի է դադարեցնել, քանզի սոյն քննարկումն իսկ արդէն բաւարար չափով անդրադարձաւ նրան: Երրորդը՝ դա կենսախոհական ապրելակերպն է, որը մենք կը քննարկենք յետագայում:

Դրամ վաստակելու ապրելակերպը մարդուն բաժին է հասնում հարկադրաբար եւ հարստութիւնը, ակնյայտօրէն, այն նպատակը չէ, որին մենք ձգտում ենք, քանի որ այն սոսկ միջոց է եւ ծառայում է որեւէ այլ բանի համար: Հետեւաբար, վերը նշուած հասկացութունները, կարող են աւելի

յաւակնել նպատակ կոչուելուն, քանի որ դրանց հետամուտ են լինում հէնց որպէս այդպիսիք ձեռք բերելու համար: Միւս կողմից, ակնյայտ է, որ դրանք էլ նպատակներ չեն, թէեւ շատ փաստարներ են բերուել հակառակն ապացուցելու համար: Ուստի, աւարտենք այս հարցի շուրջ քննարկումը:

Հաւանաբար գերադասելի կը լինէր, կամ աւելի ճիշտ՝ պէտք է մեր պարտքը լինէր, յանուն ճշմարտութեան մեզ համար թանկ բաները զոհաբերելը, յատկապէս եթէ մենք փիլիսոփաներ կամ իմաստասէրներ ենք: Որքան էլ որ թանկ լինեն այդ բաները, **բարեպաշտութիւնը պահանջում է ընկերներից վեր դասել ճշմարտութիւնը:**

Կրկին վերադառնանք մեր կողմից հետամուտ լինող նպատակի խնդրին եւ հարցնենք, թէ ինչը՞ կարող է դառնալ այդպիսին: Թւում է պատասխանը կարող է տարբեր լինել տարբեր ասպարէզների եւ գիտութիւների համար՝ այն տարբեր է բժշկութիւնում, ռազմարուեստում եւ նմանապէս՝ այլուրեք: Արդ ո՞րն է նպատակը իւրաքանչիւրի համար: Անշուշտ այն է, յանուն ինչի արւում է մնացեալը: Բժշկութիւնում դա առողջութիւնն է, ռազմարուեստում՝ յաղթանակը, ճարտարապետութիւնում՝ շինութիւնը, այլ ասպարէզներում՝ այլք, սակայն բոլոր դէպքերում եւ գործողութիւններում դա վերջնական արդիւնքն է, քանի որ յանուն դրա են բոլոր մարդիկ անում մնացած ամէն ինչը: **Ուստի, եթէ մեր արարքները հետամուտ են որոշակի նպատակի, ապա դա այն արժէքն է, որին կարելի է հասնել գործողութեամբ, իսկ եթէ վերջիններս մէկից աւելին են, ապա նպատակներն էլ կը լինեն մի քանիսը:**

Այսպիսով խնդրի քննարկումը մէկ այլ ճանապարհով մեզ բերեց նոյն կէտին, սակայն փորձենք ներկայացնել եզրահանգումը առաւել պարզորոշ կերպով: Քանի որ նպատակներն ակնյայտօրէն մէկից աւելին են եւ մենք ընտրում ենք դրանցից մի մասը (օրինակ՝ հարստութիւնը, սրինգը, կամ ընդհանրապէս՝ որեւէ գործիք) որեւէ այլ բանի հասնելու համար, ուստի, ակնյայտ է, որ ոչ բոլոր նպատակներն են վերջնական: Սակայն գերագոյն նպատակը ակնյայտօրէն վերջնական արդիւնքն է: Ուստի, եթէ վերջնական նպատակը մէկն է, ապա սա էլ հէնց այն է, ինչ մենք փնտրում ենք, իսկ եթէ առկայ են մի քանի նպատակներ, ապա դրանց մէջ միակ ամենավերջնականը կը լինի այն, ինչ փնտրում ենք: Այն, ինչը մենք աւելի ենք արժեւորում, քան որեւէ միջոց, որն անհարժեշտ է այլ բանի հասնելու համար, անուանում ենք աւելի կարեւոր նպատակ: Իսկ այն, ինչին հետամուտ ենք լինում որպէս այդպիսին՝ առանց երբեւէ այլ նպատակի ծառայեցնելու մտադրութեան, անուանում ենք վերջնական նպատակ:

Այդպիսի նպատակ, նախ եւ առաջ, համարւում է երջանկութիւնը, քանզի այն մենք ընտրում ենք ինքնին որպէս այդպիսին, այլ ոչ թէ իբրեւ միջոց մէկ ուրիշ

բանի համար: Սակայն փառքի, հաճոյքի, ողջամտութեան եւ ցանկացած այլ առաքինութեան ընտրութիւն մենք կատարում ենք ինքնին այդ արժէքների համար (քանի որ, եթէ դրանք արդիւնք էլ չտան, մենք միեւնոյն է կ'ընտրէինք հէնց դրանք): Միեւնոյն ժամանակ, մենք այդ ընտրութիւնը կատարում ենք յանուն երջանկութեան, մտածելով, որ դրանց միջոցով մենք կը հասնենք երջանկութեան: Միւս կողմից, երջանկութիւնը ոչ ոք չի ընտրում յանուն վերը նշուած արժէքների, ոչ էլ յանուն որեւէ այլ բանի: Այն ինքնանպատակ է:

Ուստի երջանկութիւնը վերջնական եւ ինքնաբաւ արժէք է եւ գործունէութեան աւարտն է:

Ինչեւէ, երջանկութիւնը գերագոյն նպատակ է, ասելը, հաւանաբար կ'ընկալուէր որպէս տափակութիւն եւ կարիք կը զգացուէր դրա բովանդակութեան աւելի ըմբռնելի պարզաբանման: Դա հնարաւոր կը լինէր անել, եթէ մենք կարողանայինք նախ որոշել մարդու գոյութեան իմաստն աշխարհում: Ճիշտ այնպէս, ինչպէս սրնգահարի, քանդակագործի կամ դերասանի եւ, ընհանրապէս, գործառոյթ կամ գործունէութիւն կատարող ամէն ինչի դէպքում արժանիքն ու ՝լաւը՞ համարւում են իրենց իսկ գործառոյթում ամփոփուած, նոյնն էլ վերաբերում է ընդհանրապէս մարդ էակին, եթէ նա որոշակի գործառոյթ ունի: Հնարաւո՞ր է արդեօք, որ հիւսնը եւ կօշկակարը որոշակի գործառոյթներ ունենան կամ գործունէութիւն իրականացնեն, իսկ մարդու գոյութիւնը իմաստազուրկ լինի: Հնարաւո՞ր է, որ նա ծնուած լինի առանց նշանակութեան: Եւ ինչպէս աչքը, ձեռքը, ոտքը եւ, ընհանրապէս, մարմի ամէն մաս որոշակի գործառոյթ ունի, հնարաւո՞ր է պնդել, որ մարդն այս ամէնից զատ ունի առանձին նշանակութիւն: Այդ դէպքում ինչու՞մ կարող է այն կայանալ: Կեանքի երեւոյթը ընդհանրական է թւում անգամ բոյսերի համար, բայց մենք ձգտում ենք մարդ էակի առանձնայատկութեան ըմբռնմանը: Ուստի, եկէք բացառենք կեանքի ուսումնասիրութիւնը սնուցման եւ աճի տեսանկիւններից: Յաջորդը կը լինի զգայական կեանքը, սակայն դա ընհանուր երեւոյթ է թւում անգամ ձիու, ցուլի եւ ընդհանրապէս բոլոր կենդանիների համար: Այսպիսով, մնում է բանական մտածողութիւն ունեցող էակի ակտիւ կեանքը, որի մի մասը ղեկավարւում է մտածողութեանբ, իսկ միւս մասը ինքնին էակն է, որը մտածում է: Եւ քանի որ ՝բանական էակի կեանքը՞ նոյնպէս երկու իմաստ ունի, մենք պէտք է կեանքը դիտարկենք գործունէութեան մասով, ինչն աւելի է համապատասխանում բուն իմաստին: Հիմա, եթէ մարդու նշանակութիւնը հոգեւոր գործունէութիւնն է, որը բանականութեան հետեւանքը կամ արդիւնքն է, եւ եթէ մենք ասում ենք, որ մարդու նշանակութիւնը համազօր է բարեկիրթ, լաւ մարդու նշամակութեանը, ինչը նոյնն է քնարահարի եւ արհեստավարժ քնարահարի դէպքում, նոյնը կարող ենք ասել առանց բացառութեան բոլոր այլ դէպքերի համար, իսկ առաքինութեան առաւելութիւնները պարզապէս լրացումներ են

գործառոյթներին: Եւ եթէ այդպէս է, մենք մարդու գործունէութիւնն ու նշանակութիւնը կարող ենք համարել կեանքի որոշակի ձեւ, իսկ կեանքն իր հերթին՝ համարել հոգեւոր գործունէութիւն եւ բանականութեամբ թելադրուած գործողութիւններ: Բարեկիրթ մարդու խնդիրն է լինել այդ ամէնի վեյանձն իրագործողը, իսկ ցանկացած գործողութիւն լաւ է կատարուած, երբ այն իրագործուած է համապատասխան կատարելութեամբ: Եթէ ամէն ինչ այսպէս է, մարդկային բարիքը յաւակնում է դառնալ առաքինութեան հետ ներդաշնակ հոգեւոր գործունէութիւն: Իսկ եթէ առաքինութիւնները մի քանիսն են, ապա ներդաշնակութիւնը ձեռք է բերւում լաւագոյնի եւ առաւել համապարփակի համապատասխան:

Դրան աւելացնենք՝ ամբողջ կայնքում՝ արտայայտութիւնը, քանի որ ինչպէս մէկ ծիծեռնակով գարուն չի գայ, այնպէս էլ մէկ օրը, կամ կարճ ժամանակահատուածը մարդուն երանելի եւ երջանիկ չեն դարձնի:

Մեր դատողութիւնները համահունչ են նրանց ասածի հետ, ովքեր երջանկութիւնը նոյնացնում են առաքինութեան հետ, քանզի առաքինութիւնից է բխում առաքինի գործունէութիւնը: Սակայն մեծ տարբերութիւն կայ, այն հարցում, թէ մենք գերագոյն բարիքը պարզապէս կ'ընկալենք, թէ նաեւ կը գործադրենք, մտքում կը պահենք այն, թէ կ'օգտագործենք մեր արարքներում: Մտքում պահելը կարող է որեւէ դրական արդիւնք չտալ, ինչպէս որ քնած, կամ այլ կերպ անգործ վիճակում գտնուող մարդու պարագայում, ինչը սակայն նոյնը չէ գործունէութիւն իրականացնելու դէպքում, քանզի ով եռանդուն է, անհրաժեշտութիւնից դրդուած կը գործի եւ՝ լաւ կը գործի: Ինչպէս օլիմպիական խաղերում ամենագեղեցիկներն ու ամենաուժեղները չեն, որ դափնիներ են վաստակում, այլ նրանք, ովքեր մրցում են (քանզի յաղթողները նրանց միջից են), նոյն կերպ էլ նրանք, ովքեր գործում են, նուաճում են, եւ արդարացիօրէն են նուաճում, բարի եւ լաւ բաները կեանքում:

Ասուածին աւելացնենք նաեւ, որ մարդը չի կարող անգամ առաքինի համարուել, եթէ վայելք չի ապրում լաւ արարքներից, քանզի ոչ ոք մարդուն արդար չի անուանի, եթէ նա վայելք չի տեսնում արդար գործերի մէջ, ոչ էլ ազատամիտ կ'անուանեն մարդուն, ով չի վայելում ազատ գործունէութիւնը, եւ նոյնն ամէն ասպարէզում է: Եթէ այդպէս է, ապա առաքինի արարքները պէտք լինեն ինքնին հաճելի: Նրանք միաժամանակ վեհ են ու բարի, եւ այս յատկանիշները պարունակում են մեծագոյն չափով, քանզի առաքինի մարդը ճիշտ է դատում այդ յատկանիշների մասին: Նրա մտածողութիւնն այնպիսին է, ինչպիսին մենք վերը ներկայացրել ենք:

Այսպիսով, երջանկութիւնը լաւագոյն, ազնուագոյն եւ ամենահաճելի բանն է աշխարհում, եւ այս յատկանիշները չեն առանձնացւում, ինչպէս դելոսեան գրութիւններում.

Ազնուագոյնն այն է, ինչ ամենաարդարն է,
Եւ լաւագոյնն է առողջութիւնը,
Սակայն հաճելին մեր սրտի ուզածին հասնելն է:

Բոլոր այս յատկութիւնները վերաբերում են լաւագոյն արարքներին եւ սրանք, կամ սրանցից լաւագոյնները, մենք նոյնացնում ենք երջանկութեան հետ: Այնուհանդերձ, ինչպէս նշել ենք, երջանկութեան համար ակնյայտօրէն անհրաժեշտ են նաեւ նիւթական բարիքներ, քանզի անհնարին կամ ոչ դիւրին է վեյանձն արարք կատարելը առանց պատշաճ նիւթական ապահովուածութեան: Շատ գործողութիւններում, մենք որպէս լծակներ օգտագործում ենք ընկերներին, հարստութիւնը եւ քաղաքական իշխանութիւնը… Ինչպէս նշել ենք, երջանկութեան համար անհրաժեշտ են նաեւ նման բարեկեցիկ պայմաններ, այդ պատճառով ոմանք երջանկութիւնը նոյնացնում են յաջողութեան, իսկ ոմանք էլ՝ առաքինութեան հետ:

Այս պատճառով հարց է ծագում՝ երջանկութիւնը ձեռք է բերւում արդեօք ուսանելո՞վ, հմտանալո՞վ կամ այլ վարժանքներո՞վ, թէ՞ աստուածային նախախնամութեան արդիւնքում, կամ գուցէ պատահականութեան արդիւնքում: Եւ եթէ մարդկանց համար գոյութիւն ունի որեւէ աստուածատուր ընծայ, ապա խելամիտ կը լինի երջանկութիւնը համարել այսպիսին եւ, ամենայն հաւանականութեամբ, ամենամեծ աստուածաշնորհը մարդուն:

Բայց այս հարցը, հաւանաբար, առանձին հետազօտութեան առարկայ է: Երջանկութիւնը, այնուհանդերձ, եթէ անգամ աստուածաշնորհ չէ, այլ առաքինութեան, ուսուցման կամ այլ վարժանքների արդիւնք է, պէտք է դասուի ամենաաստուածահաճոյ բաների շարքում, քանզի առաքինութեան արդիւնքը պէտք աշխարհի լաւագոյն բանը լինի, ինչպէս եւ երանելի մի բան:

Միաժամանակ, երջանկութիւնը մի ինչ-որ ընդհանուր բան է շատերի համար՝ բոլոր նրանց համար, ովքեր չեն կորցրել առաքինութեան հասնելու հնարաւորութիւնը եւ կարող են դրան հասնել որոշակի ուսուցման եւ ջանադրութեան միջոցով: Սակայն եթէ գերադասելի է երջանիկ լինել այս կերպ, քան պատահականութեան շնորհիւ, ապա կարելի է ընդունել, որ սա է ճշմարտութիւնը, քանի որ այն ամէնը, ինչ կախուած է բնական գործօնից, բնականոն կերպով լաւագոյնն է եւ, այն ամէնը, ինչ կախուած է գիտութիւնից կամ ցանակացած այլ բանական գործօնից եւ յատկապէս, եթէ այն կախուած է

բոլոր պատճառներից լաւագոյնից: Հետեւաբար, մեծագոյն սխալ կը լինէր պատահականութեանը վստահել վսեմագոյնն ու ազնուագոյնը:

Այս հարցի պատասխանը ակնյայտ է նաեւ երջանկութեան սահմանումից, քանզի այն բնորոշուեց որպէս հոգեւոր առաքինի գործունէութեան որոշակի տեսակ: Ինչ վերաբերում է մնացած բարիքներին, դրանց մի մասը երջանկութեան անհրաժեշտ պայման են, իսկ միւսներն էլ աջակից ու օգտակար են իրենց բնոյթով: Ասուածը համահունչ է վերը շարադրուածին, ուր մենք քաղաքականութեան արդիւնքը բնորոշեցինք որպէս լաւագոյն արդիւնք: Եւ քաղաքականութիւնն է, որ իր հնարաւորութիւնների զգալի մասով կողմնորոշում է քաղաքացիներին որոշակի ուղղութեամբ, այն է՝ բարի լինել եւ վեյանձն արարքների ընդունակ: